ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.05.2018թ.

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/36

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի հայցի ապահովում կիրառելու մասին 17.05.2018թ. թիվ ԱՎԴ2/0651/02/18 որոշումը, և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի պահանջով՝

ՈՐՈՇԵՑԻ

ՀՀ ֆինանսների նախարարության 23.03.2018թ. թիվ 03/26-3/5328-18 գրությամբ «Սիֆիէս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02614085) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԱՄ-2018/36 ընթացակարգը կասեցնել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ